Երևանում կինոդպրոց-կինոստուդիա կառուցելու ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը

Ծրագրով նախատեսվում է միջազգային չափանիշներին համապատասխան և նորագույն տեխնոլոգիաներով հագեցված ֆիլմերի արտադրության և կինոարտադրության ուսուցման համար նախատեսված ստուդիաների կառուցում:

Ծրագրի առաջին բաղադրիչով նախատեսվում է բարձրորակ ֆիլմերի արտադրության համար կինոստուդիայի կառուցում: Կինոստուդիան կունենա նվազագույնը 3 մեծ տաղավար, որոնք կծառայեն մասշտաբային նկարահանումների համար: Մեծ տաղավարներից առաջինը նախատեսվում է բացօթյա, իսկ մյուս երկուսը՝ փակ: Կկառուցվեն նաև 7 փոքր տաղավարներ, որոնք կլինեն փակ տարածքներում: Տաղավարներում կկիրառվեն նորագույն համակարգչային և լազերային տեխնոլոգիաներ: Նման քանակի տաղավարները թույլ կտան նկարահանել միաժամանակ մեկից ավելի ֆիլմեր: Համալիրը կունենա նաև դերասանների, ռեժիսորների, սցենարիստների, օպերատորների, պրոդյուսերների և ֆիլմարտադրության այլ մասնակիցների համար նախատեսված շենք՝ կազմակերպական աշխատանքների համար, մասնավորապես՝ տաղավարների սպասարկման, դերասանների դիմահարդարման, դեկորատիվ և տեխնիկական հարմարությունների պատրաստման, մոնտաժի, ֆիլմերի մշակման, դերասանների ընտրության, կինոարտադրության մասնակիցների հանգստի, սննդի համար և այլն:
Համալիրը գրավիչ կլինի զբոսաշրջիկների համար, որտեղ նրանք կարող են հետևել ֆիլմերի նկարահանման գործընթացին, ֆիլմերի տաղավարներում կկազմակերպվեն զբոսանքներ այցելուների համար:

Ծրագրի երկրորդ բաղադրիչով նախատեսվում է նաև կինոստուդիային կից կառուցել կինոդպրոց: Ուսանողները տեսական գիտելիքներ կստանան կինոդպրոցում՝ հմուտ ուսուցիչներից, իսկ գործնական գիտելիքները կստատան կինոստուդիայի տաղավարներում:

Տեխնիկական ցուցանիշներ	Տարածքի մակերեսը՝ 25.0 հա: Կինոստուդիայի 3 մեծ տաղավարի մակերեսը կկազմի շուրջ 2000 քմ: Տաղավարներից մեկը նախատեսվում է բացօթյա, իսկ մյուս երկուսը՝ փակ: Փակ տաղավարների բարձրությունը կկազմի նվազագույնը 10մ: 7 փոքր տաղավարների մակերեսը կկազմի շուրջ 400 քմ:

Ծրագրի ժամկետներ	Շինարարության տևողությունը՝ շուրջ 3 տարի:
Ծրագրի արժեքը	Շինարարության արժեքը կկազմի շուրջ 10 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում:
Ներկա իրավիճակ	Առկա է հայեցակարգային նախագիծ: